

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 1/14

ք.Երևան

12 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 10.08.2020թ.-ի թիվ 434166/04 և 11.09.2020թ.-ի թիվ 419116/16 որոշումների դեմ «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ալիկ Առաքելյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ալիկ Առաքելյանի (այսուհետ նաև՝ բողոքաբեր) կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիմում-բողոք ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 10.08.2020թ.-ի թիվ 434166/04 և 11.09.2020թ.-ի թիվ 419116/16 որոշումների դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Քննարկվող դեպքում ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 10.08.2020թ.-ի թիվ 434166/04 և 11.09.2020թ.-ի թիվ 419116/16 որոշումները, համապատասխանաբար՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 23.12.2020թ. թիվ 434166/04-Ա և 25.12.2020թ. թիվ 419116/16-Ա որոշումներով, ճանաչվել են անվավեր: Հետևապես՝ ղեկավարվելով վերը նշված իրավանորմի դրույթներով բողոքաբերի դիմում-բողոքի քննարկման վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ տնօրեն՝ Ալիկ Առաքելյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այս ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքանշվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ